

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն


ՀԱՏՈՐ ԽԳ. ՊՐԱԿ Դ.

1885

ՀՈԿՏ. ՆՈՅԵՄԲ. ԴԵԿՏ.

ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա.Ձ.Դ.



Ա.Ձ.Մ.Ա.Վ.Է.Պ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ ներկայ Պրակս մեր հայրենի աշխարհին հին եւ նոր պատմութեանց եւ պատմական թատերաբեմին հոխ եւ մանրակրկիտ ստորագրութեամբ, կը բանայ առջեւնիս մեր անցեալը՝ յուսումն եւ յօրինակ ազգային ներկայ վիճակին եւ ուղղութեան. — Դեռ եւս կը հնչէր մեր լսելաց մէջ ՇԻՐԱԿայ դիւցազանց՝ կամսարական եւ թագրատունի քաջաց՝ փառաց եւ արութեանց արծազանգն, դեռ չէինք մոռացել Ախուրեան գետոյն դղբաձայն հոսանաց վանգիւնն եւ քաղաքամայրն Անույ բախտաւոր եւ տարաբախտ աւուրց ուրախութեան եւ սգոյ, ցնծալիլ հանդիսից եւ դառն ցաւոց ձայներն, եւ ահաւասիկ ՍԻՍՈՒՄԱՆ անունն, եւ

Ռուբինեանց ու Հեթմեանց պսակազարդ քաջագունքն, Սարոսի եւ Կիւղնոսի խոխոջանքն, Տարսոնի եւ Այասայ պարծանքն եւ աղէտքն՝ կը գրաւեն յինքեանս մեր բովանդակ ուշադրութիւնը. դարձեալ գողտրիկ եւ փափուկ գրիչ մ'է, դարձեալ նախկին վեճմ եւ գորովական տեսարանաց հեղինակին մտաց եւ սրտին բաբախմունքն են, որ կը յափշտակեն հանեն զմեզ մերժ Հայակիւիկեան բարձր գազաթանց վրայէն՝ հովտաց եւ դաշտաց տեսարաններն եւ անդամօր տեղի ունեցած դէպքերը ցոյց տալու, մերժ

Պրակ Դ.

կ' իջեցընեն զմեզ դաշտային յափշտակիչ տեսարանաց մէջ, հանդարտ եւ կամ աշխոյժ ընծացիւք՝ վսեմ եւ կամ եռանդուն գետոց միջավայրը, ցուցանելու ասդիս անդին սփռուած գեղեցիկ աւանաց, շինից, բերդորէից մէջ՝ ընդարձակ սահմանօք եւ գործու- նէութեամբ՝ քաղաքներ. մերձ եւս ծովային տեսարանաց գեղապատկեր մը առջեւնիս բանալով՝ Հայոց ծրցոյն եւ կիւիկեան ծովախորշին վահառաբերձ նաւուց երթեւեկը ցոյց կու տան, որք հեռագիր թելերու նման *Լեռնեանց երկրին* նոխուծիւնն ու մեծութիւ- նը կը հռչակեն բովանդակ արեւմտեան աշխարհի մէջ:

Հ. Ղեւոնդի այս նոր եւ մեծ երկասիրութիւնն, *Սխտանայ Համագործիւնն*, տարիով առաջ զարթուցեր էր 'ի սիրտս ազգասիրաց իղծ եւ փափաք՝ փութով տեսնելու անոր 'ի լոյս ընծաւորին. արդ, 1885 ամս. կնքեց գործոյն բովանդակութիւնը, Ս Ղազարու մա- մուլն իսկ յատուկ ուրախութեան հանդիսով մը շնորհաւորեց մեծարգոյ Հեղինակը, եւ յանրուաց յիշատակ՝ իբրեւ փոքրիկ առհաւատչեայ մեծագոյն սիրոյ եւ մեծարանաց՝ իրեն եւ իւր երկասիրութեան կը նուիրէ այժմ Բազմավէպ Հանդիսարանիս տարեկան շրջանին վերջին քառորդը, ինչպէս ծանուցեր էինք նաեւ նախընթաց Պրակին մէջ:

Պարտք կը համարինք աստանօր յայտնելու Ուսումնականութիւս ընթերցողաց, որ այս մեր առ Մեծ. Հեղինակն, իբրեւ առ ազգային եւ ընդհանուր գրականութեան զարգա- ցուցիչ՝ ընծայած սիրոյ եւ մեծարանաց նուէրնիս, ոչ միայն յանգէտս եւ անծանօթ էր իրեն, այլ եւ հակառակ ամենեւին իւր կամաց եւ համեստութեան. սակայն կարծեմք թէ իւր գրեթէ կիսադարեան ունեցած գրականական արդիւնքն՝ արժանաւորք են հանդի- սաւոր մեծարանաց եւ ցոյցի բովանդակ ազգայնութեան:

ԽՄԲԱԳԻՐՆ



Եւ ի թագաւորէս ւոյ